ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ШАУМЯН АНАИТ АРУТЮНОВНА

ПРОБЛЕМА ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտ. դոկտոր **Քոչարյան Տիգրան Տոնիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտ. դոկտոր **Քեռյան Գարիկ Միշայի**
քաղաքական գիտ. թեկնածու **Մելիքյան Սիրանուշ Սերոժի**

առաջատար կազմակերպություն՝
ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի դեկտեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի նոյեմբերի 12-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Институте философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения.**

Научный руководитель:
доктор политических наук **Кочарян Тигран Тоникович**

Официальные оппоненты:
доктор политических наук **Керян Гарик Мишаевич**
кандидат политических наук **Меликян Сирануш Серожовна**

Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 16-ого декабря 2026 г. в 13:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Ал. Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 12-ого ноября 2026 г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժողովրդավարական պետության հիմքում ընկած է այն գաղափարը, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, իսկ պետական կառավարման մարմինները հաշվետու են թե՛ օրենքի, թե՛ հասարակության առջև: Այս համատեքստում ազգային անվտանգության համակարգը, իրականացնելով երկրի տարածքային ամբողջականության, սահմանների պաշտպանության և ներքին կայունության ապահովման գործառույթներ, պետք է գործի ոչ թե փակ, այլ՝ հանրային վերահսկողության պայմաններում:

Ընդհանուր առմամբ, վերահսկողությունը կառավարման առանցքային գործառույթներից է, որը թույլ է տալիս բացահայտել շեղումները, սխալներն ու թերությունները, փնտրել նոր ռեսուրսներ և հնարավորություններ: Առանց արդյունավետ վերահսկողության՝ դժվար է լիարժեք իրականացնել կառավարման մյուս երեք հիմնական գործառույթները՝ պլանավորումը, կազմակերպումը և մոտիվացումը[1]:

Որքան բաց են պետության ղեկավար կառույցների և պաշտոնավարող անձանց գործունեությունները հասարակության առջև, այնքան փոքր է նրանց հնարավորությունները չարաշահելու իրենց տրված լիազորությունները:

Քաղաքացիական վերահսկողությունը կարող է իրականացվել ցանկացած ոլորտում՝ ապահովելով պետության հավասարակշռված, օրինական և քաղաքացիների հիմնարար իրավունքներն ու ազատությունները պահպանող կառավարում:

Ժողովրդավարական պետության առաջնահերթ խնդիրներից է ապահովել կառավարության և քաղաքացիական հասարակության արդյունավետ համագործակցությունը: Պետությունը պետք է բաց լինի քաղաքացիական վերահսկողություն իրականացնող սուբյեկտների համար և աջակցի գործողություններին, որոնք ապահովում են ղեկավար մարմինների գործունեության թափանցիկությունն ու վերահսկելիությունը:

Այս ամենը, սակայն, առաջ է բերում կարևոր հարց՝ որքանով է անվտանգային ոլորտում իրականացվող վերահսկողությունը նպաստավոր պետության համար, և արդյո՞ք այս ոլորտում թափանցիկությունը չի խաթարի ազգային անվտանգության ապահովման գործընթացը:

[1] Տե՛ս Արշակյան Ք., Մարքեթինգ և կառավարում, Կրթության ազգային կենտրոնի հրատ., Երևան, 2014, էջ 200

Միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ անվտանգային կառույցների նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը կարևոր դեր է խաղում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման գործում: ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը շեշտում է, որ անվտանգության ոլորտի նկատմամբ հանրային վերահսկողությունը հանդիսանում է ժողովրդավարության ամրապնդման անհրաժեշտ պայման[2]: Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերում ընդգծվում է, որ առանց օրենսդիրի և քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավման անվտանգային մարմինները կարող են դառնալ ինքնավար և ոչ հաշվետու կառույցներ[3]:

Հետազոտության թեմայի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տեսական, այլև՝ գործնական առումով՝ նպաստելով անվտանգության ոլորտի նկատմամբ վստահության բարձրացմանը, ժողովրդավարական կառավարման ամրապնդմանը և Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարմանը: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական վերահսկողության ներդրումն ու զարգացումը ոչ միայն ներքին պահանջ է, այլև՝ միջազգային պարտավորություն, որը խթանում է երկրի ժողովրդավարական զարգացումը և վստահելիությունը միջազգային հարթակներում: ՀՀ-ն մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ է և միացել է բազմաթիվ կոնվենցիաների, որոնք պահանջում են, որպեսզի պետությունն ապահովի ուժային կառույցների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն: Օրինակ՝

- Անդամակցությունը Եվրոպայի խորհրդին. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք փաստաթղթեր (օրինակ՝ Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիա), որտեղ անուղղակիորեն ամրագրվում են թափանցիկության, հաշվետվողականության և ժողովրդավարական վերահսկողության սկզբունքները:
- Անդամակցությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը. կազմակերպության անդամ երկրներից պահանջվում է զինված ուժերի և անվտանգության

[2] Տե՛ս UNDP, Public Oversight of the Security Sector, Geneva, 2003, www.undp.org: Cole E. Public Oversight of the Security Sector: A Handbook for Civil Society Organizations. UNDP pub., Bratislava, 2015, p. 14

[3] Council of Europe, Democratic Oversight of Security Services, Strasbourg, 2015, www.coe.int:, դիտում՝ 25.02.2026թ.

ծառայությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն՝ որպես ժողովրդավարության բաղկացուցիչ:

- Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների պարտավորություններ. ՄԱԿ-ի տարբեր կոնվենցիաներ ու առաջարկություններ ընդգծում են, որ ազգային անվտանգության ապահովումը չի կարող իրականացվել առանց ժողովրդավարական վերահսկողության:

Արդյունքում, թեմայի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տեսական մոտեցումների բացահայտման, այլև՝ գործնական առաջարկությունների մշակման համար, որոնք կփորձեն հնարավորինս խթանել Հայաստանի Հանրապետությունում անվտանգության ոլորտում հաշվետվողականության, թափանցիկության և ժողովրդավարական վերահսկողության ամրապնդմանը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները և բազմաբնույթ մարտահրավերները պետություններից պահանջում են ազգային անվտանգության քաղաքականության հիմնախնդիրների ամբողջական ու հետևողական վերլուծություն: Այս շրջանակում, յուրաքանչյուր պետության անվտանգային քաղաքականության մեջ քաղաքացիական վերահսկողության ուղղությունն առանձնանում է իր հատուկ կարևորությամբ, ինչը պայմանավորում է տվյալ ոլորտի հետազոտական և գիտահետազոտական աշխատանքների մշակման արդիականությունը:

Անհրաժեշտ է փաստել, որ վերջին տարիների ընթացքում տարբեր մակարդակներով իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության վերաբերյալ: Միանշանակ, ընդգծվում են ոլորտի համար հենքային նշանակություն ունեցող գիտահետազոտական հաստատությունների և առանձին մասնագետների աշխատությունները, որոնք կազմավորել են ՀՀ անվտանգային համակարգի գիտատեսական հիմքը՝ դրանով իսկ հիմնարար հարթակ ստեղծելով ոլորտի գործնական զարգացման և դիտարկվող բացթողումների և անճշտությունների վերացման համար[4]:

Հետազոտության իրավական հիմքը կազմել են քննարկվող հիմնահարցի կարգավորմանն ուղղված օրենսդրական և քաղաքական-իրավական փաստաթղթերը, միջազգային իրավունքի հանրաճանաչ

[4] **Ալեքսանյան Ա.Ս.,** Քաղաքացիական հասարակության ձևավորման տեսական մի քանի հիմնահարցեր // Բանբեր Երևանի համալսարանի, 1996, № 2., էջ 45-52:

սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև՝ համապատասխան հռչակագրերը, կոնվենցիաները, պայմանագրերը և համաձայնագրերը[5]:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը՝ Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականությունը և դրանում քաղաքացիական վերահսկողության դերը լայնորեն լուսաբանվել են նաև տեղեկատվական դաշտում, ուսումնասիրվել են հայկական և միջազգային մամուլում հրապարակված համապատասխան նյութերն ու հրապարակումները[6]:

Այդուհանդերձ, իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ, չնայած գոյություն ունեցող օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերին, շարունակում են պահպանվել հանրային վերահսկողության կառուցակարգերի արդյունավետության խնդիրներ և տեղեկատվական սահմանափակումներ: Վերջիններս պահանջում են լրացուցիչ բարեփոխումներ և միջազգային փորձի առավել արդյունավետ կիրառություն:

Այդպիսով, կարելի է եզրակացնել, որ թեմայի ընտրությունը հիմնավորված է ինչպես տեսական, այնպես էլ՝ հետազոտական տեսանկյունից՝ ընդգրկելով խնդրի թե՛ տեսական, թե՛ գործնական ասպեկտները: Հետազոտությունը նպատակ ունի զարգացնել մասնագիտական գիտելիքային բազան, նպաստել առկա խնդիրների լուծման ուղիների մշակմանը և ներկայացնել կիրառական առաջարկություններ:

[5] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217-Ա բանաձևի համաձայն), http://www.arlis.am; 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ՀՀ ՊՏ ՀԹ/2015, 21.12.2015 թ., http://www.arlis.am, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, Հուլիս 2020թ., https://bit.ly/3gNrfKa, National Security Strategy of United States of America, (adapted on November 2025) https://clc.li/DDZLa, Opinion of the Economic and Social Committee on the role and contribution of civil society organisations in the building of Europe. CES 851/99 D/GW, Brussels, 22 September, 1999. 17p. https://clc.li/Imhhg:

[6] Strategic Survey for Israel. Institute for National Security Studies. Tel Aviv. Tel Aviv University. https://www.inss.org.il/publication/?ptype=406: **Calhoun H.** Management in information technology: concept, goals and objectives, 24.01.2025, https://techconfronts.com/17463453-management-in-information-technology-concept-goals-and-objectives/ **Carothers T.,** The Concept of Civil Society Is a Recent Invention// Carnegie Endowment for International Peace. Washington D.C. №. 117. 2000, http://www.carnegieendowment.org/ pdf/CivilSociety.pdf; How Serbia's Civil Society is Building Resiliency. https://goo.su/Rmvzm/:

Հետազոտության օբյեկտն է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգը և նրա արդյունավետությունը հանրային վերահսկողության տեսանկյունից՝ ներառելով հիմնականում պետական հատուկ ծառայությունների համակարգը, որի գործունեությունը ուղղված է պետության անվտանգության ապահովմանը, ինչպես նաև՝ քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:

Հետազոտության առարկան քաղաքացիական վերահսկողության կառուցակարգերի քաղաքական-իրավական, ինստիտուցիոնալ և գործնական կիրառությունն է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում: Այդ շրջանակում առանձնացվում են Ազգային ժողովի վերահսկողական գործառույթները, մարդու իրավունքների պաշտպանի դերը, քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներգրավվածությունը:

Հետազոտության նպատակն է վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական վերահսկողության կազմակերպական և գործառութային հիմունքները՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, ինչպես նաև բացահայտել առկա հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծմանն ուղղված գիտավերլուծական և գործնական նշանակություն ունեցող ուղիներ:

Վերոնշյալ նպատակներին համապատասխան՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել «քաղաքացիական վերահսկողություն» հասկացությունը և դրա ինստիտուցիոնալ ու բովանդակային առանձնահատկությունները,
- հետազոտել ՀՀ ազգային անվտանգության համակարգում քաղաքացիական վերահսկողության հիմնատարրերի ձևավորման և ապահովման զարգացումները,
- վերլուծել ազգային անվտանգության երաշխավորման համատեքստում քաղաքացիական վերահսկողության ռազմավարական հիմքերն ու ծրագրային ուղղությունները,
- գնահատել քաղաքացիական հասարակության և պետական մարմինների փոխհարաբերություններն ազգային անվտանգության քաղաքականության ձևավորման գործընթացում,
- վերլուծել հանրային հաղորդակցությունը՝ որպես ազգային անվտանգային քաղաքականության զարգացման կարևոր ուղղություն,
- դիտարկել հանրային կարծիքի տեսագործնական ազդեցությունն անվտանգային քաղաքականության և որոշումների ձևավորման գործընթացներում,

- հետազոտել միջազգային փորձը (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, Եվրոպայի խորհուրդ) քաղաքացիական վերահսկողության ոլորտում՝ գնահատելով ՀՀ-ում առաջավոր փորձի կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են գիտահետազոտական ոլորտում լայն կիրառություն ունեցող դիալեկտիկական և համակարգային մոտեցումները, ինչպես նաև՝ նեղ մասնագիտական մեթոդները՝ իրավաքաղաքական վերլուծություն, համեմատական, պատմահրավական, գնահատման, համակարգակառուցվածքային, վիճակագրական և այլ մեթոդներ: Գիտական աշխատանքի հիմքում դրվել են օբյեկտիվության, կոնկրետության, բազմակարծության և պատմականության սկզբունքները, որոնք ապահովում են հետազոտության հիմնավորվածությունը:

Հետազոտության ընթացքում համադրվել են պաշտոնական գնահատականներն ու դիրքորոշումները, մասնագիտական գրականության մեջ ներկայացված տարբեր մոտեցումները, ինչպես նաև իրականացվել է տարբեր երկրների քաղաքացիական վերահսկողության առանձնահատկությունների համեմատական վերլուծություն: Միաժամանակ ուսումնասիրվել են անվտանգության քաղաքականության մեջ հաղորդակցության և հանրային կարծիքի գնահատման տեսական և գործնական բաղադրիչները, ինչպես նաև՝ հաշվետվողականության արդյունավետության հիմնական տարրերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգում քաղաքացիական վերահսկողությունը ներկայացվում է որպես ազգային անվտանգության ապահովման, ժողովրդավարական կառավարման և պետական ինստիտուտների արդյունավետ գործունեության փոխկապակցված ու միասնական համակարգ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս վերաիմաստավորել քաղաքացիական վերահսկողության դերը ոչ միայն որպես իրավական կամ քաղաքական գործիք, այլև՝ որպես անվտանգության կառավարման ռազմավարական և ինստիտուցիոնալ բաղադրիչ, որի զարգացումը կարող է նպաստել պետական կառավարման որակի, հանրային վստահության և ազգային դիմակայունության բարձրացմանը:

Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

1. Ազգային անվտանգության վերաբերյալ ժամանակակից մասնագիտական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ անվտանգության ապահովման երկու տարբեր հայեցակարգային մոտեցումներ են դիտարկվում, որոնք ուսումնասիրում են

սպառնալիքների ազդեցությունն ու դրանց կառավարման մեխանիզմները: Եվրասիական մոտեցումը, որը բնութագրվում է «սպառնալիք-վտանգ-վնաս» մոդելով, իսկ անգլոսաքսոնական մոտեցումը, որը սպառնալիքի զարգացման մեխանիզմը դիտարկում է «շահ–վերահսկողություն-վերահսկողության բացակայություն–մարտահրավեր-ռիսկ» մոդելի միջոցով, որտեղ շահը և վերահսկողությունը կապված են ռեսուրսների, տարածքների և տեխնոլոգիաների հետ, մինչդեռ մարտահրավերը լուծում պահանջող խնդրահարույց իրավիճակ է, իսկ ռիսկը՝ կորցրած շահույթը: Այս ուսումնասիրության նորույթը նրանում է, որ երկու մոտեցումների համակցված վերլուծությունը կիրառելի է ՀՀ ազգային անվտանգության համատեքստում՝ թույլ տալով ոչ միայն գնահատել ներքին և արտաքին սպառնալիքների փոխազդեցությունը, այլև՝ մշակել հստակ և համապարփակ ռազմավարական առաջարկություններ՝ հենվելով ինչպես սպառնալիքների կանխարգելման, այնպես էլ՝ ռիսկերի կառավարումն ապահովող գործիքների վրա:

2. Գիտավերլուծական հիմնավորմամբ ընդգծվում է, որ նոր աշխարհաքաղաքական իրողություններում ազգային և տարածաշրջանային անվտանգության հարցերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության մշակումը՝ որպես ազգային շահերի ապահովման երկարաժամկետ ծրագիր, կապված է նորարարական բարեփոխումների իրականացման և պետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանման ռազմավարական ազգային առաջնահերթությունների հետ:

3. Ատենախոսությունում առանձնացված գնահատվում է, որ ժողովրդավարական արդի համակարգերում հանրային կարծիքը հանդես է գալիս նաև որպես անվտանգային քաղաքական որոշումների օրինականացման և վերահսկողության գործոն: Քաղաքացիական հասարակության ակտիվությունը, լրատվամիջոցների բազմազանությունն ու սոցիալական ցանցերի տարածվածությունը մեծապես ընդլայնում են հասարակության մասնակցության հնարավորությունները՝ վերածելով հանրային կարծիքը ազդեցիկ լծակի: Ավելին, անվտանգության համապարփակ զարգացումներում հանրային կարծիքը շարունակում է կարևոր գործոն լինել ազգային անվտանգության կայունության պահպանման, արտաքին ու ներքին անվտանգային քաղաքականությունների լեգիտիմության ամրապնդման և հավասարակշռման գործում:

4. Հիմնավորվում է, որ ՀՀ անվտանգային համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև պետական ինստիտուտների հանդեպ հանրային վստահությունը մեծապես կախված է տեղեկատվական թափանցիկության ապահովումից և հանրությանը ճշգրիտ

տեղեկատվության տրամադրման աստիճանից: Կարևոր է քաղաքացիներին իրազեկել ազգային անվտանգության ոլորտում իրականացվող բարեփոխումների մասին, խթանել երկխոսություն քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների հետ, աջակցել անվտանգային հաստատությունների դրական իմիջի ձևավորմանը տեղեկատու արշավների միջոցով: Այդ ուղղությամբ հաղորդակցության կառավարման արդյունավետությունը պահանջում է այն տարանջատել ներքին ու արտաքին ուղղվածությամբ իրականացվող քաղաքականությունների: Ներքին հաղորդակցությունը ներառում է տեղեկատվության փոխանակումը անվտանգային ինստիտուցիոնալ համակարգում ինչպես հավասար մակարդակներում, այնպես էլ՝ ենթակայությամբ գործող կառույցներում: Արտաքին հաղորդակցության համակարգերն ուղղված են անվտանգության համակարգի և հասարակության, ինչպես նաև՝ միջազգային կառույցների միջև արդյունավետ կապի պահպանմանը: Դրանք ներառում են ԶԼՄ-ների, լրագրողների և լրատվամիջոցների հետ գործակցությունը, միջազգային կառույցների հետ տեղեկատվության փոխանակումը, նաև հանրային տեղեկատվական պլատֆորմների կառավարումը:

5. Նշված և մի շարք այլ բնույթի հիմնախնդիրների կանոնակարգումը ենթադրում է երկարաժամկետ ռազմավարությունների, դրանցից բխող ծրագրային գործողությունների մշակում և իրականացում, որոնցում կարևորվում են՝

- երկրի պաշտպանության ամրապնդումը և ՀՀ սահմանադրական կարգի, ինքնիշխանության, անկախության, պետական և տարածքային ամբողջականության անձեռնմխելիության ապահովումը,
- ազգային ներդաշնակության, քաղաքական և սոցիալական կայունության ամրապնդումը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը և պետության ու քաղաքացիական հասարակության փոխգործակցության մեխանիզմների կատարելագործումը,
- կյանքի որակի բարելավումը, հանրային առողջապահության ամրապնդումը և երկրի կայուն ժողովրդագրական զարգացման ապահովումը,
- մշակույթի և հոգևոր-բարոյական արժեքների պահպանումն ու զարգացումը,
- ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը և նոր հնարավորությունների պարբերական գնահատումը,
- Հայաստանի Հանրապետության ընդհանուր կենսունակության ամրապնդումը՝ շեշտադրելով բազմակենտրոն աշխարհում հաստատուն կայունության և փոխշահավետ գործընկերության պահպանման առաջնահերթությունը:

6. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ անվտանգային համակարգում հիմնականում ամբողջական պատկերացում ձևավորված չէ, թե ինչ է քաղաքացիական վերահսկողությունը: Այսպես, անվտանգային հաստատությունների ղեկավար անձնակազմը լիարժեք պատկերացում ունի քաղաքացիական վերահսկողության կառուցակարգերի մասին, սակայն արդեն իսկ ենթակա ու կատարողական մակարդակներում դրանք տարբեր կերպ են «ընկալվում» կամ «մեկնաբանվում»: Հետևապես, կարևոր է կրթական ցեզքի և իրազեկման բարձրացումը, որի նպատակը գաղափարական արժեքային հենքի ամրապնդումն է ինչպես անհատի, այնպես էլ՝ քաղաքականության իրականացնողների վարքագծերում, քանի որ կրթության և իրազեկման բարձրացման միջոցով արձանագրված փոփոխություններն առավել կայուն են, և դրանց օգուտն ավելի երկարաժամկետ է:

7. Վերլուծելով Հայաստանի Հանրապետության ազգային անտանգության համակարգում քաղաքացիական վերահսկողության գործառույթներն ու դրանց արդյունավետությունը՝ առաձնացվում են այդ քաղաքականության զարգացման հետևյալ ուղղությունները.

- իրավաքաղաքական և ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում: ՀՀ Սահմանադրությունը և նորմատիվ հիմքերը նախատեսում են անվտանգային քաղաքականության վերահսկողություն, սակայն դիտարկելի են նաև խնդրահարույց ամրագրումներ, որոնք նվազեցնում են հանրային վերահսկողության արդյունավետությունը:
- Քաղաքացիական հասարակության որոշ հատվածների սահմանափակ ներգրավվածությունը անվտանգային գործընթացներում և լրատվամիջոցների մակերեսային վերահսկողությունը նույնպես հանգեցնում է բազմաթիվ մարտահրավերների. օրինակ՝ մի շարք լրատվականներով տեղեկատվությունը հաճախ չի հրապարակվում կամ հասանելի չէ հասարակության համար: Ավելին՝ հասարակական սեկտորից կայուն ներգրավվածության ցածր մակարդակը թույլ չի տալիս ձևավորել լիարժեք հաշվետվողականության մշակույթ, ինչը նվազեցնում է հանրային վստահությունը հենց այդ շրջանակների հանդեպ՝ ազդելով նաև ամբողջ վերահսկողական արդյունավետության վրա:

ՀՀ քաղաքացիների վստահությունն անվտանգության մարմինների նկատմամբ ազդեցիկ գործոն է հանրային վերահսկողության արդյունավետության համար: Ուստի պետք է անընդհատ զարգացնել այնպիսի մշակույթ, որտեղ հանրային վերահսկողությունը կդիտարկվի որպես բնական և անհրաժեշտ գործընթաց՝ օրենքի և հանրային վստահության ամրապնդման շեշտադրմամբ: Հնարավոր խնդիրներ կարող են լինել մի շարք անվտանգային ուղղություններում տեղեկատվության

բացակայությունը կամ քողարկումը, անկախ զեկույցների սահմանափակ հասանելիությունը, քաղաքացիների և հասարակական բոլոր դերակատարների իրավաքաղաքական գիտակցության մակարդակի տարբերությունը»:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Հետազոտության շրջանակները բավականին լայն են, քանի որ ընդգրկում են ՀՀ անվտանգության համակարգում հիմնարար դեր ու նշանակություն ունեցող քաղաքացիական վերահսկողության գործնականում իրականացման հիմնահարցեր: Դրանց համեմատական վերլուծության հիման վրա առաջ են քաշվում հայեցակարգային բարեփոխումների մոտեցումներ և ուսումնասիրվող խնդիրների համապարփակ լուծումներ:

Ատենախոսության տեսական նշանակությունը անվտանգության համակարգի բարեփոխումների համատեքստում քաղաքացիական վերահսկողության քաղաքականության արդյունավետության գիտատեսական գնահատման մեջ է: Միաժամանակ ուսումնասիրվում են համապատասխան կառուցակարգերի զարգացման հնարավորություն-ները, իրականացվում են առանձին ուղղությունների կանխատեսումներ, ինչը նպաստում է ոլորտի հետագա կատարելագործմանը:

Առաջարկվող գիտատեսական ամփոփումները և եզրահանգումները կարող են ծառայել որպես մեթոդաբանական հիմք՝ ազգային անվտանգության բնագավառում քաղաքական-իրավական հարցերին վերաբերող հետագա գիտական հետազոտությունների համար: Բացի այդ, գործնական տեսանկյունից ատենախոսությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության կատարելագործման, ինչպես նաև՝ դրա հայեցակարգային հիմքերի զարգացման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժնի կողմից: Ատենախոսության դրույթները հրապարակվել են գիտական հանդեսներում՝ թվով 6 հոդվածներով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ յուրաքանչյուրը բաղկացած երկուական ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև՝ աշխատանքի փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Առաջին գլխում՝ «**Քաղաքացիական վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգում**» վերտառությամբ, քննարկվում են «քաղաքացիական վերահսկողություն» հայեցակարգի հասկացությունը, դրա հիմնատարրերի բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացվում է քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես ազգային անվտանգության քաղաքականության իրագործման կառուցակարգ: Առաջին՝ **«Քաղաքացիական վերահսկողություն» հասկացության և բովանդակային հիմնատարրերի վերլուծություն**» ենթագլխում, համակողմանի հետազոտվում է մտավորականների մոտեցումները և պատմական զարգացման յուրօրինակությունները, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ որպես քաղաքացիական վերահսկողության ապահովման կառուցակարգերի գործունեությունը: Վերահսկողության դերն ու կարևորությունն ակնհայտ է, սակայն այն ավելի մեծ նշանակություն է ստանում, երբ կիրարկվում է որպես «քաղաքացիական վերահսկողության» ձևաչափ: Ընդ որում՝ «քաղաքացիական վերահսկողությունը» իրականացվում է «քաղաքացիական հասարակության» կողմից: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի քաղաքացիական հասարակության քաղաքական-իրավական բովանդակության բացահայտումը և դրա էվոլյուցիայի ուսումնասիրությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Քաղաքացիական վերահսկողությունը որպես ազգային անվտանգության քաղաքականության իրագործման կառուցակարգ**», նշվում է, որ քաղաքացիական հասարակությունն առաջին հերթին կառուցակարգված համակարգ է, որը համապատասխան ինստիտուտների միջոցով ունակ է ոչ միայն ինքնակառավարվելու, այլև՝ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու այն ոլորտներում, որոնք շարունակում են մնալ պետության գործառույթների շրջանակում: Այս գործընթացի արդյունքում ինքնասահմանափակվում է պետության գործառույթների շրջանակը և, միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության վերահսկողության շնորհիվ մյուս ոլորտներում բարձրանում է պետական գործառույթների իրականացման արդյունավետությունը:

Երկրորդ գլուխը՝ «**Ազգային անվտանգության քաղաքականության իրականացման նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հայեցակարգային շրջանակները**» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «**Քաղաքացիական վերահսկողության ռազմավարական հիմքերն ու ծրագրային ուղղությունները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում**» ենթագլխում բազմակողմանի և ամբողջական ուսումնասիրության են ենթարկվել քաղաքացիական վերահսկողության ռազմավարական հիմքերն ու ծրագրային ուղղությունները ՀՀ ազգային անվտանգության համակարգում: Վերլուծելով ժամանակակից իրականության մեջ պետական ապարատի նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության երևույթը՝ անդրադարձ է կատարվել այդ ինստիտուտի վերաբերյալ տեսության շրջանակներում ձևավորված մոտեցումներին և դրանց էությունը:

Երկրորդ՝ «**Քաղաքացիական հասարակության և պետական մարմինների փոխհարաբերությունը ազգային անվտանգության քաղաքականության վերահսկողության ձևաչափում**» ենթագլխում, ընդգծվում է, որ քաղաքացիական հասարակության պայմաններում պետական կառավարման համակարգն ուժեղանում է հորիզոնական կապերով: Հասարակական կազմակերպություններն ապահովում և խթանում են հանրային կառավարմանն ու տեղի ունեցող գործընթացներին բնակչության քաղաքացիական մասնակցությունը՝ որոշումների ընդունման ընթացակարգերին ներգրավելով քաղաքացիների լայն շերտեր: Ժամանակակից ժողովրդավարական պետությունն ազգային անվտանգությունը սահմանում է որպես մի վիճակ, որի դեպքում ապահովված են անձի, հասարակության և պետության իրավունքը, ազատությունը և անվտանգությունը, երաշխավորված է նրանց հաջող փոխկապված համակարգային զարգացումը:

Երրորդ գլուխը՝ «**Հանրային հաղորդակցությունը որպես քաղաքացիական վերահսկողության բաղադրիչ Հայաստանի հանրապետության ազգային անվտանգության համակարգում**» վերնագրով, ներկայացվել է հանրային հաղորդակցության՝ որպես ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության զարգացման կարևոր ուղղության, ընդհանուր բնութագիրն ու դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտվել է հանրային կարծիքի տեսագործնական ազդեցությունը ՀՀ անվտանգային քաղաքականության մեջ որոշումների ձևավորման վրա: Առաջին՝ «**Հանրային հաղորդակցությունն իբրև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում քաղաքացիական վերահսկողության ուղղություն**» ենթագլխում հիմնավորվել է այն դրույթը,

համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի գործունեության նկատմամբ հանրային վստահությունը կարևոր ռազմավարական ռեսուրս է: Անվտանգության ոլորտում պետական որոշումների արդյունավետությունը հաճախ կախված է ոչ միայն նյութական և ինստիտուցիոնալ հնարավորություններից, այլև՝ հասարակության պատրաստակամությունից՝ աջակցելու այդ որոշումներին և հետևելու պետական կառույցների հաղորդած տեղեկատվությանը: Տարբեր դերակատարներ կարող են փորձել ազդել հասարակության ընկալումների վրա՝ տարածելով կեղծ տեղեկություններ, չափազանցված գնահատականներ կամ մանիպուլյատիվ մեկնաբանություններ: Նման պայմաններում պետության կողմից վստահելի տեղեկատվության տրամադրումը դառնում է հասարակության դիմադրողականության բարձրացման կարևոր միջոց:

Վերջին ենթագլխում՝ «**Հանրային կարծիքի ներուժը քաղաքացիական վերահսկողության իրացման գործում և դրա ազդեցությունը Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության համատեքստում**», նշվում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ժամանակակից համակարգում հանրային հաղորդակցությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես պետական մարմինների տեղեկատվական գործունեության ձև, այլև՝ որպես քաղաքացիական վերահսկողության կարևոր ուղղություն: Այն ապահովում է պետության և հասարակության միջև տեղեկատվական կապը, նպաստում է պետական կառույցների հաշվետվողականությանը, բարձրացնում է հանրային իրազեկվածությունը և հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակությանը մասնակցել անվտանգության քաղաքականության վերաբերյալ հանրային քննարկումներին: Միաժամանակ հանրային հաղորդակցության արդյունավետությունը մեծապես կախված է թափանցիկության և տեղեկատվական անվտանգության միջև ճիշտ հավասարակշռությունից:

Ատենախոսության շրջանակներում իրականացված վերլուծությունների և ներկայացված գնահատումների հիման վրա առանձնացվել են հետևյալ հիմնական **եզրահանգումները**.

1. Ժողովրդավարության կայացման գործընթացում պետության համար առաջնային նշանակություն ունեցող կարևոր տարրերից է հասարակության, մասնավորապես՝ ոչ կառավարական շրջանակների կողմից իրականացվող քաղաքացիական վերահսկողության ինստիտուտը: Այն իրականացվում է քաղաքացիական վերահսկողության տարբեր սուբյեկտների՝ ոչ կառավարական կազմակերպությունների, անհատների, հասարակական կազմակերպությունների և այլ իրավասու դերակատարների միջոցով:

Անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը համարվում է առավել բարդ և ոչ միանշանակ գնահատվող գործընթաց: Մի կողմից այն նպաստում է ոլորտի թափանցիկության բարձրացմանը և գործունեության արդյունավետությանը, իսկ մյուս կողմից կարող է որոշ չափով մեծացնել համակարգի խոցելիությունը: Քաղաքացիական վերահսկողության կայացման և անվտանգության ոլորտի կառավարման բարելավման համար անհրաժեշտ է փուլային և համապարփակ մոտեցում, որը հաճախ պահանջում է երկարաժամկետ, երբեմն՝ նույնիսկ տասնամյակներ ընդգրկող գործընթաց:

2. Հասարակության լայն շերտերի համար քաղաքացիական վերահսկողությունը ժողովրդավարական կառավարման կարևոր նախապայման է: Միևնույն ժամանակ, այն ունի նաև գործնական նշանակություն՝ նպաստելով բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործմանը, հասարակական կարգի ապահովմանը, արտակարգ իրավիճակներում պաշտպանության և օգնության կազմակերպմանը, ինչպես նաև՝ մարդու իրավունքների պահպանմանն ինչպես ուժային կառույցներում, այնպես էլ՝ հասարակական կյանքի այլ ոլորտներում: Վերոնշյալ գործոնները, իրենց հերթին, նպաստում են ժողովրդավարական արժեքների պահպանմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև՝ ժողովրդավարական կառավարման մոդելի կայացմանը: Չնայած առկա քննադատություններին՝ այս մոդելը շարունակում է դիտարկվել որպես արդյունավետ և արդարացված կառավարման ձև:

3. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում իրականացվող բարեփոխումների համատեքստում առանձնահատուկ արդիականություն են ձեռք բերում անվտանգային համակարգի բարեփոխումները՝ ուղղված երկրի անվտանգության դեմ թե՛ ներքին և թե՛ արտաքին սպառնալիքների արդյունավետ չեզոքացմանը: Բնականաբար, պետության արդյունավետ անվտանգային համակարգի երաշխավորումը, որը կապահովի պետության և քաղաքացիների շահերի փոխադարձ ու հավասարակշռված իրականացումը, հանդիսանում է իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի առավել բարդ և առանցքային խնդիրներից մեկը:

Ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ քաղաքացիական վերահսկողությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես ժողովրդավարության բաղադրիչ, այլև՝ որպես ազգային անվտանգության ամրապնդման ինքնուրույն ռազմավարական գործոն, որը նպաստում է համակարգի դիմակայունության և արդյունավետության բարձրացմանը:

4. Անվտանգության գործընթացներում հաղորդակցությունը և դրա կառավարման արդյունավետությունը պահանջում է այն տարանջատել

ներքին ու արտաքին ուղղվածությամբ իրականացվող քաղաքականությունները: Ներքին հաղորդակցությունն ապահովում է ղեկավարության և ստորաբաժանումների միջև տեղեկատվության հոսք, կարգապահության և տեղեկատվական անվտանգության պահպանություն: Արտաքին հաղորդակցությունն ուղղված է պաշտպանական-անվտանգային համակարգի և հասարակության, ինչպես նաև՝ միջազգային կառույցների միջև կապի պահպանմանը՝ ներառելով ՋԼՄ-ների, լրագրողների, միջազգային լրատվամիջոցների, սոցիալական մեդիայի և հանրային տեղեկատվական պլատֆորմների արդյունավետ կառավարումը:

5. Քաղաքացիական վերահսկողությունը պետական ապարատի նկատմամբ հանդիսանում է իրավական պետության կառուցման հիմնարար նախապայմաններից մեկը: Այն ապահովում է հանրային արդյունավետ մասնակցությունը պետական կառավարման գործընթացներին և նպաստում է ժողովրդավարական սկզբունքների պահպանմանը, ինչը առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Քաղաքացիական հասարակությունը և դրա կողմից իրականացվող վերահսկողությունը զարգացել են պետության և նրա ինստիտուտների սերտ փոխգործակցության պայմաններում: Այդ փոխազդեցությունը կարևոր պայման է պետական համակարգի կայունության և արդյունավետության համար: Այս համատեղ զարգացումը հիմք է ստեղծում իշխանությունների տարանջատման, սահմանադրական իրավունքի և ժողովրդավարական արժեքների գործնական իրականացման համար՝ հանդես գալով որպես արդիական, կայուն և ժողովրդավարական պետության ձևավորման և ամրապնդման հիմնական ուղենիշ:

6. Հասարակական համակարգի զարգացումն ու փոխակերպումները ենթադրում են ինստիտուցիոնալ կառույցների ձևավորում, ինչպես նաև՝ ավանդական ինստիտուտների արդիականացում և վերափոխում: Փոխակերպվող համակարգի անվտանգության շահերը պահանջում են ձևավորվող ինստիտուտի համակողմանի վերլուծություն՝ ընդգրկելով ոչ միայն դրանց գործառույթներն ու արդյունավետ իրականացման հնարավորությունները, այլև՝ հնարավոր դիսֆունկցիաները: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես բացահայտ, այնպես էլ՝ լատենտ գործառույթների հավանականությունն ու բնույթը՝ դրանք դիտարկելով տվյալ հասարակական համակարգի այլ բաղադրիչների՝ ազգային, մշակութային, ավանդույթային և արժեքային գործոնների հետ փոխկապակցության համատեքստում: Այս ամենը ենթադրում է համալիր և համակարգային մոտեցման կիրառում՝ ուղղված արդյունավետ և կայուն ինստիտուցիոնալ զարգացման ապահովմանը:

7. Ատենախոսության թեմայի շրջանակներում ընդգծվում է փոխազդեցության այնպիսի հայեցակարգը, որի համաձայն՝ քաղաքացիական վերահսկողությունը և ազգային անվտանգությունը գտնվում են փոխլրացնող հարաբերությունների մեջ և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց արդյունավետությունը: Հայաստանի Հանրապետության արդի անվտանգային պայմաններում համակարգված ձևով առանձնացվում են քաղաքացիական վերահսկողության արդյունավետության վրա ազդող ներքին և արտաքին գործոնները՝ քաղաքական կայունություն, իրավական միջավայր, ինստիտուցիոնալ զարգացում, հասարակական վստահություն, միջազգային համագործակցություն և անվտանգային սպառնալիքների բնույթ: Նշվածի հաշվառմամբ՝ ատենախոսության շրջանակներում առանձնացվում է նաև հիբրիդային պատերազմների, կիբեռսպառնալիքների և տեղեկատվական անվտանգության ազդեցությունը քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացման վրա:

8. Քաղաքացիական վերահսկողության համակարգի կարևոր բաղադրիչներից է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը անվտանգության քաղաքականության քննարկմանը: Հասարակական կազմակերպությունները, փորձագիտական կենտրոնները և զանգվածային լրատվության միջոցները կարող են հանդես գալ որպես հանրային վերահսկողության արդյունավետ գործիքներ՝ բարձրացնելով անվտանգության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հանրային կառավարման համակարգում գործում են որպես «զսպումների» և «հակակշիռների» մեխանիզմ՝ ապահովելով կառավարման բևեռների բազմազանության և զուգակշռման սկզբունքը: Պետական իշխանության կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության և երկխոսության գրավականը հանդիսանում է նրանց փոխադարձ ազդեցությունն ու ներկայացվածությունը:

9. Հանրային հաղորդակցությունը և դրա կառավարումը (հանրային կապերի կառավարումը) հանդիսանում է կազմակերպությունների, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող համակարգված գործունեություն, որը նպատակ ունի ապահովել հաղորդակցությունը հանրության հետ: Այն ներառում է հաղորդակցման ռազմավարությունների մշակումը, տեղեկատվության տարածումը, հանրային կարծիքի ձևավորումը և երկկողմանի փոխազդեցության ապահովումը:

Այս գործընթացն ուղղված է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին լսարաններին՝ ներառելով քաղաքացիներին, աշխատակիցներին, գործընկերներին, ներդրողներին, լրագրողներին և այլ շահագրգիռ կողմերին: Հանրային հաղորդակցման կառավարումը կարևոր դեր է խաղում կազմակերպությունների և հանրային հաստատությունների վստահելիության, հեղինակության և հաղորդակցման արդյունավետության բարձրացման գործում:

10. Արդյունավետ հանրային հաղորդակցությունը բարձրացնում է հասարակության վստահությունը, ապահովում է պետական քաղաքականության լեգիտիմությունը և թույլ է տալիս դիմակայել տեղեկատվական սպառնալիքներին: Հետևաբար, ազգային անվտանգության ռազմավարության մշակման և իրականացման գործընթացում անհրաժեշտ է առաջնային ուշադրություն հատկացնել հանրային հաղորդակցության զարգացմանը և դրա ինստիտուցիոնալ ամրապնդմանը: Այս համատեքստում առաջարկվում է չափելի ցուցիչների համակարգ, որի միջոցով հնարավոր է գնահատել անվտանգության ոլորտում քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունն իրավական, կազմակերպչական, տնտեսական և հասարակական չափումներով:

11. Հայաստանի Հանրապետության համար հանրային հաղորդակցության զարգացումը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության համակարգի ժողովրդավարական արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման: Արդյունավետ հանրային հաղորդակցությունը այն մեխանիզմն է, որի միջոցով անվտանգային քաղաքականությունը կարող է դառնալ ոչ միայն պետական կառույցների գործունեության ոլորտ, այլև՝ հասարակության համար հասկանալի, վերահսկելի և հաշվետու գործընթաց: Այդպիսի համակարգի ձևավորումը կարող է նպաստել պետական ինստիտուտների նկատմամբ վստահության ամրապնդմանը, տեղեկատվական դիմադրողականության բարձրացմանը և քաղաքացիական վերահսկողության ինստիտուցիոնալ մշակույթի զարգացմանը:

Հետևաբար, հանրային հաղորդակցությունը ՀՀ ազգային անվտանգության համակարգում պետք է դիտարկել ոչ թե որպես օժանդակ կամ երկրորդական գործառույթ, այլ՝ որպես անվտանգության կառավարման ժամանակակից համակարգի կարևոր բաղադրիչ, որի արդյունավետությունը անմիջականորեն կապված է ժողովրդավարական կառավարման որակի, պետական ինստիտուտների լեգիտիմության և հասարակության անվտանգության ապահովման հետ:

12. ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգում, ինչպես և ընդհանուր պետական հեղինակության ու հանրային վստահության

վերականգնման համար կարևոր է ռազմական ճգնաժամերից հետո ապահովել տեղեկատվական թափանցիկություն, տրամադրել ճշգրիտ տեղեկություն, իրազեկել վերականգնողական միջոցառումների և պաշտպանության ոլորտի բարեփոխումների մասին, խթանել երկխոսությունը քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների հետ, ինչպես նաև՝ իրականացնել ռազմական ուժերի դրական իմիջի վերականգնմանն ուղղված տեղեկատվական արշավներ: Քաղաքացիական հասարակության մասնակցության արդյունավետության գնահատման չափանիշները ներառում են անվտանգության գործընթացներին մասնակցության աստիճանը, փորձագիտական ազդեցությունը, հանրային վստահության մակարդակը և պետական որոշումների վրա ազդեցության գործակիցները:

13. Հանրային կարծիքն ու քաղաքականությունը դինամիկ փոխազդեցության մեջ են, որը կախված է ժողովրդավարության մակարդակից, ինստիտուցիոնալ մեխանիզմներից և կուսակցական վերահսկողությունից: Ժողովրդավարական պետություններում հանրային կարծիքը կարող է ուղղորդել քաղաքական գործընթացները, իսկ ավտորիտար համակարգերում հաճախ վերահսկվում կամ անտեսվում է, եթե չի սպառնում ռեժիմի կայունությանը: Անվտանգության որոշումների ընդունման գործընթացում հանրային տրամադրությունները կարող են գործել որպես քաղաքական լեգիտիմության աղբյուր կամ ճնշման գործոն՝ քաղաքականության ուղղությունը ձևավորելու համար: Այս փոխհարաբերությունն առավել տեսանելի է ընտրական գործընթացների, սոցիալական շարժումների և լեգիտիմության ապահովման փորձերի ժամանակ:

Զանգվածային լրատվամիջոցներն ու հանրային կարծիքը հանդիսանում են անվտանգային քաղաքականության որոշումների գործընթացում փոխլրացնող ուժեր: ԶԼՄ-ները, որպես «օրակարգ ձևավորող» գործիք, փոխանցում և վերամշակում են քաղաքական ուղերձները՝ հանրությանը ներկայացնելով փաստերի և մեկնաբանությունների խտացված տարբերակներ: Քաղաքացիներն էլ այդ տեղեկատվության հիման վրա ձևավորում են իրենց դիրքորոշումը և կարող են ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրել անվտանգային քաղաքականության ձևավորման վրա:

14. Հանրային կարծիքը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության համատեքստում ունի զգալի քաղաքացիական և քաղաքական ներուժ: Այն կարող է հանդես գալ որպես պետական կառույցների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության, հետադարձ կապի և քաղաքականության լեգիտիմության ապահովման կարևոր մեխանիզմ: Հանրային կարծիքի

միջոցով քաղաքացիները կարող են արտահայտել իրենց մտահոգությունները, գնահատել պետական կառույցների գործունեությունը և ազդել հասարակական օրակարգի ձևավորման վրա:

Միևնույն ժամանակ, հանրային կարծիքը չի կարող դիտարկվել որպես ազգային անվտանգության քաղաքականության միակ կամ գերակա որոշիչ: Այն փոփոխական է, զգայուն է տեղեկատվական և քաղաքական ազդեցությունների նկատմամբ և երբեմն ձևավորվում է սահմանափակ տեղեկատվության պայմաններում: Հետևաբար, դրա արդյունքները պետք է համադրվեն մասնագիտական փորձագիտական գնահատականների, ռազմավարական նպատակների և ազգային անվտանգության օբյեկտիվ պահանջների հետ:

15. Հանրային կարծիքի իրական ներուժը դրսևորվում է այն ժամանակ, երբ այն վերածվում է պետական իշխանության հետ երկկողմ կապի և քաղաքացիական վերահսկողության գործնական մեխանիզմի: Հայաստանի անվտանգային քաղաքականության պայմաններում դրա արդյունավետ կիրառումը կարող է նպաստել պետական կառույցների նկատմամբ վստահության ամրապնդմանը, անվտանգային քաղաքականության լեգիտիմության բարձրացմանը, տեղեկատվական դիմադրողականության զարգացմանը և հասարակության ավելի ակտիվ մասնակցությանն ազգային անվտանգության գործընթացներին:

Վերջնական գնահատմամբ՝ հանրային կարծիքը պետք է դիտարկել ոչ թե որպես պետության անվտանգային որոշումների փոխարինող, այլ որպես դրանց ժողովրդավարական վերահսկողության և հասարակական լեգիտիմության կարևոր բաղադրիչ: Հանրային կարծիքի, մասնագիտական փորձագիտության և պետական ռազմավարական մոտեցումների հավասարակշռված համադրումն է այն հիմքը, որի վրա կարող է ձևավորվել արդյունավետ, հաշվետու և հասարակության վստահությունը վայելող անվտանգային քաղաքականություն Հայաստանի Հանրապետությունում:

Եվ վերջնարդյունքում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը քաղաքացիական վերահսկողությունը դիտարկում է որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչ: Նման վերահսկողության մեխանիզմների զարգացումը նպաստում է պետական կառավարման արդյունավետությանը, բարձրացնում է հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ և ուժեղացնում է ազգային անվտանգության համակարգի դիմակայունությունը ժամանակակից սպառնալիքների պայմաններում:

Ատենախոսության հիմնական դրույթները և նորույթ պարունակող եզրակացությունները արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. **Շահումյան Ա.Հ.,** Քաղաքացիական վերահսկողության առանձնահատկություններն ազգային անվտանգության համատեքստում // «Գիտական Արցախ» հանդես, 2025, N 1 (24), էջ 114-124:

2. **Շահումյան Ա.Հ.,** "The main actors of civilian oversight as a mechanism for ensuring national security" // «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, Երևան, 2025, № 1, էջ 156-168:

3. **Շահումյան Ա.Հ.,** Ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակն ազգային անվտանգության ոլորտի քաղաքացիական վերահսկողության գործընթացում // «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2025, N 19, էջ 175-183:

4. **Շահումյան Ա.Հ.,** Հանրային կարծիքի ազդեցությունը անվտանգային քաղաքականության և որոշումների ձևավորման վրա. տեսագործնական հետազոտություն // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2025, N 4 (126), էջ 111-121:

5. **Շահումյան Ա.Հ.,** "The role of public communication in civilian oversight of national security of the republic of Armenia" // «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, Երևան, 2026, № 1, էջ 172-182:

6. **Քոչարյան Տ.Տ., Շահումյան Ա.Հ.,** Քաղաքացիական հասարակության վերահսկողության սահմանադրաիրավական հիմունքները և դրա զարգացման դինամիկան Հայաստանի Հարապետությունում // «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 2026, 1-3/319-321, հունվար-մարտ, էջ 31-43:

ШАУМЯН АНАИТ АРУТЮНОВНА

ПРОБЛЕМА ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 "Политические институты и процессы". Защита диссертации состоится 16-ого декабря 2026 г. в 13:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, А. Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Современные геополитические процессы и многообразные вызовы требуют от государств полного и последовательного анализа фундаментальных проблем политики национальной безопасности. В этих рамках направление гражданского контроля в политике безопасности каждого государства отличается своей особой значимостью, что обусловливает актуальность разработки исследовательских и научно-исследовательских работ в данной области.

Проведённые исследования показывают, что, несмотря на существующие законодательные и институциональные основы, продолжают сохраняться проблемы эффективности механизмов общественного контроля и информационные ограничения. Последние требуют дополнительных реформ и более эффективного применения международного опыта.

Целью исследования является анализ и оценка организационных и функциональных основ гражданского контроля в Республике Армения как одного из важнейших факторов обеспечения национальной безопасности, а также выявление существующих проблем и предложение путей, направленных на их решение, имеющих научно-аналитическое и практическое значение.

Диссертация состоит из введения, трёх глав, каждая из которых состоит из двух подглав, заключения и списка использованной литературы.

В первой главе под названием **«Гражданский контроль в системе безопасности Республики Армения»** рассматриваются концепция, понятие гражданский контроля, содержательные особенности его основных элементов, а также представляется гражданский контроль как механизм реализации политики национальной безопасности. В первой подглаве **«Анализ понятия „гражданский контроль“ и его основных содержательных элементов»** всесторонне исследуются подходы мыслителей и особенности

исторического развития, а также деятельность институтов гражданского общества как механизмов обеспечения гражданского контроля. Во второй подглаве **«Гражданский контроль как механизм реализации политики национальной безопасности»** отмечается, что гражданское общество прежде всего представляет собой структурированную систему, которая посредством соответствующих институтов способна не только к самоуправлению, но и к осуществлению эффективного контроля в тех сферах, которые продолжают оставаться в рамках функций государства.

Вторая глава под названием **«Концептуальные рамки гражданского контроля за реализацией политики национальной безопасности»** состоит из двух подглав. В первой подглаве **«Стратегические основы и программные направления гражданского контроля в системе национальной безопасности Республики Армения»** всестороннему и полному исследованию подвергнуты стратегические основы и программные направления гражданского контроля в системе национальной безопасности Республики Армения. Во второй подглаве **«Взаимоотношения гражданского общества и государственных органов в формате контроля за политикой национальной безопасности Республики Армения»** подчёркивается, что в условиях гражданского общества система государственного управления укрепляется посредством горизонтальных связей.

В третьей главе под названием **«Общественная коммуникация как составляющая гражданского контроля в системе национальной безопасности Республики Армения»** представлены общая характеристика общественной коммуникации как важного направления развития политики национальной безопасности Республики Армения и особенности её проявления, а также раскрыто теоретико-практическое влияние общественного мнения на формирование решений в политике безопасности Республики Армения. В первой подглаве **«Общественная коммуникация как направление гражданского контроля в системе национальной безопасности Республики Армения»** обосновывается положение, согласно которому общественное доверие к деятельности системы национальной безопасности Республики Армения является важным стратегическим ресурсом. В последней подглаве **«Потенциал общественного мнения в осуществлении гражданского контроля и его влияние в контексте политики безопасности Республики Армения»** отмечается, что в современной системе национальной безопасности Республики Армения общественную коммуникацию следует рассматривать не только как форму информационной деятельности государственных органов, но и как важное направление гражданского контроля.

SHAHUMYAN ANAHIT HARUTYUN

THE ISSUE OF CIVILIAN CONTROL IN THE CONTEXT OF THE NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on December 16, 2026, at 13:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

Current geopolitical developments and multifaceted challenges require states to conduct a comprehensive and consistent analysis of the fundamental issues surrounding national security policy. In this context, the aspect of civilian oversight within any state's security policy stands out due to its particular importance, a fact that underscores the relevance of developing research and scholarly inquiry in this field.

Conducted research indicates that, despite existing legislative and institutional frameworks, issues regarding the effectiveness of public oversight mechanisms, as well as restrictions on access to information persist. The latter require additional reforms and a more effective application of international experience.

The aim of this research is to analyze and evaluate the organizational and functional foundations of civilian oversight in the Republic of Armenia, as a critical factor in ensuring national security, as well as to identify existing challenges and propose solutions that are both analytically sound and practically applicable.

The dissertation consists of an introduction, three chapters: each comprising of two subchapters: a conclusion, and a bibliography. The first chapter, titled **"Civilian Oversight within the Security System of the Republic of Armenia,"** examines the concept of "civilian oversight" and the substantive characteristics of its core elements; it also presents civilian oversight as a mechanism for the implementation of national security policy. The first subchapter, titled **"Analysis of the Concept and Substantive Elements of 'Civilian Oversight"**, the approaches of intellectuals and the unique features of historical development are comprehensively examined, as are the activities of civil society institutions, which serve as mechanisms for ensuring civilian oversight. In the second subchapter, titled **"Civilian Oversight as a Mechanism for Implementing National Security Policy"**, it is noted that civil society is, first and foremost, a structured system capable, through its respective institutions, not only of self-governance but also of exercising effective oversight in areas that remain within the scope of state functions.

The second chapter, titled **"Conceptual Frameworks for Civilian Oversight of the Implementation of National Security Policy"**, consists of two subchapters. In the first subchapter: **"Strategic Foundations and Programmatic Directions for Civilian Oversight within the National Security System of the Republic of Armenia"**: the strategic foundations and programmatic directions for civilian oversight within the national security system of the Republic of Armenia have been subjected to a comprehensive and thorough examination. In the second subchapter titled **"The Relationship Between Civil Society and State Bodies within the Framework of Oversight of the RA National Security Policy"**, it is emphasized that, in the context of civil society, the state governance system is strengthened through horizontal linkages.

The third chapter, titled **"Public Communication as a Component of Civilian Oversight within the National Security System of the Republic of Armenia"**, presents a general overview and the specific manifestations of public communication, viewed as a key direction for the development of the Republic of Armenia's national security policy and examines the theoretical and practical influence of public opinion on the decision-making process within the country's security policy. In the first subchapter titled **"Public Communication as a Dimension of Civilian Oversight within the National Security System of the Republic of Armenia"**, it is argued that public trust in the functioning of the Republic of Armenia's national security system constitutes a vital strategic resource. In the final subchapter: **"The Potential of Public Opinion in the Implementation of Civilian Oversight and Its Influence within the Context of the Republic of Armenia's Security Policy"**, it is noted that, within the modern national security system of the Republic of Armenia, public communication should be viewed not merely as a form of informational activity of the state bodies, but also as a significant way for civilian oversight.

